Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 13

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<25>> օգոստոսի 2021թ. գ. Երևան

2021 թվականի օգոստոսի 25-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ա. Պապյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Ն. Թևոսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:

Նիստից բացակայում էին հանձնաժողովի անդամ Ա. Թումանյանը, Ա. Կարապետյանը, Ա. Բաղալյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:

2.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

3.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում:

Քննարկվեցին՝

ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ 2021թ. օգոստոսի 11-ի, ՀԱՄԼԵՏ ԽԱԼԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ և ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 2021թ. օգոստոսի 12-ի հայտերը և հայտերին կից ներկայացված փաստաթղթերը՝ Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ 2021թ. օգոստոսի 11-ի, ՀԱՄԼԵՏ ԽԱԼԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ և ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 2021թ. օգոստոսի 12-ի հայտերը և հայտերին կից ներկայացված փաստաթղթերը՝ Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ՝

Գարիկ Զաքարյանին, Համլետ Խալաթյանին և Հովհաննես Մարտիրոսյանին և նրանց կողմից լիազորված անձ Ս. Գյոզալյանին 2021 թվականի օգոստոսի 16-ի համապատասխանաբար թիվ ԱՍ/25.1/21002-2021, ԱՍ/25.1/21004-2021, ԱՍ/25.1/21000-2021գրություններով տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է լիազոր մարմին ներկայացնել ավտոմոբիլն այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում օրինականությունը հաստատող և հերթական փորձարկումները հավաստող փաստաթղթի պատճենը, իսկ նույն կարգի 11.1 կետի համաձայն՝ հայտատուն սույն կարգի 11-րդ կետով սահմանված փաստաթղթերի պատճենների հետ միաժամանակ ներկայացնում է փաստաթղթերի բնօրինակները, որոնցից սույն կարգի 11-րդ կետի 1-ին, 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ համադրելուց հետո անմիջապես բնօրինակները վերադարձվում են հայտատուին, իսկ նույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ

համադրելուց հետո բնօրինակները վերադարձվում են հայտատուին՝ լիցենզիայի և ներդիրի հետ միաժամանակ:

Հայտատուների կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերում առկա է միայն ներկայացված ավտոմոբիլների վրա տեղադրված գազաբալոնի հերթական փորձարկումը հավաստող Ձև N 3 վկայականները, իսկ ավտոմոբիլն այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում օրինականությունը հաստատող՝ ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման 1-ին կետի «ա)» ենթակետով հաստատված կանոնակարգով սահմանված Ձև N 2-ը առկա չէ (գազաբալոնային սարքավորումների տեղադրման վերաբերյալ հղումը բացակայում է նաև ներկայացված Ձև N 3 վկայականում):

Միաժամանակ տեղեկացվել են, որ չեն ներկայացվել ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 11-րդ կետի 1-ին, 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի բնօրինակները (ավտոմոբիլի տեխնիկական անձնագիր, ֆիզիկական անձի անձնագիր և վարորդական վկայական), որոնք փաստաթղթերի պատճենների հետ համադրելուց հետո անմիջապես կվերադարձվեն ներկայացնողին:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Գարիկ Զաքարյանի, Համլետ Խալաթյանի և Հովհաննես Մարտիրոսյանի կողմից լիազորված անձ Ս. Գյոզալյանի կողմից 2021 թվականի օգոստոսի 23-ին լիազոր մարմին ներկայացված գրությամբ չի ներկացվել ավտոմոբիլն այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում օրինականությունը հաստատող Ձև N 2 տեղեկանքը, պատճառաբանելով, որ ավտոմոբիլների սեփականատերերի կողմից գնման պահին ավտոմոբիլները եղել են այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորած, իսկ նախկին սեփականատերերը վերասարքավորման օրինականությունը հաստատող Ձև N 2 տեղեկանք չեն տրամադրել:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԶԱՔԱՐՅԱՆ	0 կողմ, 4 դեմ
ՀԱՄԼԵՏ ԽԱԼԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆ	0 կողմ, 4 դեմ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝ ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» օրենքի 28-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 11-

րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 66-րդ կետի պահանջներին, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեցին՝

Անհատ ձեռնարկատեր ԱՐԱՄԱՅԻՍ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ 2021 թվականի օգոստոսի 11-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05426 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003 և N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» ՍՊԸ-ի 2021 թվականի օգոստոսի 18-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05341 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից մինչև N 00026-ը ներառյալ ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր ԱՐԱՄԱՅԻՍ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ 2021 թվականի օգոստոսի 11-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05426 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003 և N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» ՍՊԸ-ի 2021 թվականի օգոստոսի 18-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05341 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից մինչև N 00026-ը ներառյալ ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ
ԱՐԱՄԱՅԻՍ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի օգոստոսի 19-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05202 լիցենզիայի N 00008, N 00009, N 00010, N 00022 և N 00025 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց «ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի օգոստոսի 19-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05202 լիցենզիայի N 00008, N 00009, N 00010, N 00022 և N 00025 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան